

ՈՒՍՈՒՄՆ ՀՆԳԵՏԱՍԱՆՈՐԵԱՅ

Հրատարակի առաջին 8-ին և 22-ին:

Սրբազան Գրքի և Ընթերցողության Թանգարանը. Կ Մեծի Ներսիս 6:

Տարեկան գին	Գրքի գին	Կտակ	100
Վեցամսեայ	«	«	60
Օրոր երկնիքի բաժանարար եղանակը համարձակ վճարելու է:			

Տ ԴԵԿՏԵՄԲԵՐ

Ա. ՏԱՐԻ 1860

Թիի 7

Ի Ր Ե Ի Ո Ւ Ն Ք

Տես թիւ, 5.

Մեր նախնիքաց թերթերուն մէջ իրաւանց վրայ ընդհանուր տեսութիւն մը տուինք, ուր համառօտիւ բացատրեցինք թէ իրաւունք ըսած բաներնիս երկու ազատ անհատներու կամ երկու բարոյական մարմիններու իրարու հետ ըրած համառօտ պայմանադրութենէն յառաջ եկած պարտաւորութիւնն է: Սա ալ յիշեցինք թէ ստանի պայմանադրութիւններու նպատակն ան կարգութիւններ վերցնել, ու մարդոց պահպանութիւնն ու երջանկութիւնն ապահովելն է. և թէ՛ ստանի բարձր ու կարեւոր նպատակ մ'ունեցող և անոր հասնելու համար եղած որ և իցէ գործողութենէ յառաջ եկած պարտաւորութիւն մը սրբազան ու պարտաւորիչ է: Յետոյ՝ մարդկային ազգին այլ և այլ ընկերական վիճակներուն և անոնց մէջ մարդոց իրարու հետ ունեցած յարաբերութիւններուն համեմատ իրաւունքն երեք գլխաւոր ճիւղերու բաժնեցինք. այսինքն Ազգաց իրաւունք, Բազմապիւն իրաւունք, Իրաւունք ազգաց առանձին: Ետեւ մէջ Ազգաց իրաւունքն ազգերու, իբրեւ ամէն կախումէ ազատ գերագոյն հեղինակութիւններու վերաբերեալ ըլլալուն համար կարեւորագոյն ըլլալով հարկ է որ անկէ սկըսինք:

Բայց դեռ աս նիւթին միջամուխ չեղած, հարկաւոր կը համարինք տեսակ մը իրաւանց կամ օրինաց յիշատակութիւնն ընել. աս օրէնքն ազգի մը հիմնական օրէնք (loi fondamentale) ըսուածն է: Ես տեսակ օրէնքը սահմանադրական ազգերը միմակ կրնան ունենալ, և սահմանադրական սկզբունքին արդիւնքն է: Հիմնական օրէնքն

ազգի մը ան կանոնն է որով անիկա իր կառավարութեան կերպը կ'որոշէ. անանկ որ ան օրէնքով Ազգը գերագոյն հեղինակութիւն եղած կ'ըլլայ, և ան անձը կամ մարմինը՝ որուն իր ներքին և արտաքին գործքերը կառավարելու իշխանութիւնը կու տայ, իր գործողութիւններուն մէջ քիչ շատ կը չտիաւորուի կամ կը սահմանաւորուի:

Մեր ազգային Սահմանադրութիւնն ըսած նոր կանոնիս, մեր ազգային կառավարութեան համար տեսակ մը ներքին հիմնական օրէնք է: Սահմանադրական սկզբունքին վրայ մեր նախնիքաց թուոյն մէջ մասնաւոր յօդուածով մը խօսեցանք. ուստի հիմնական օրէնքին վրայ այսչափ յիշատակութիւն ընելն հոս բաւական համարելով մեր առաջիկայ նիւթին գանք: Մեր ընթերցողներէն կը խնդրենք որ իրաւանց վրայ մեր գրելու յօդուածներն ուշի ուշով ու համբերութեամբ կարդան: Արեւել է թէ մեր դրածները տեղ տեղ ցամաք, տեղ տեղ քիչ մը խորին, երբեմն ալ գուցէ երկար երևին. բայց նիւթին բնութիւնը մեզ անանկ երևնալու պիտի ստիպէ. ընդհանրապէս գիտնալու է թէ քաղաքակրթութիւն սիրող մարդոյ համար չկայ նիւթ մը որ այնչափ վսեմ, կարեւոր ու միանգամայն կրթական ըլլայ, որչափ աս ընկերութեան ամենէն բարձր աստիճաններուն, այն է՝ կառավարութեանց մէջ տեղի եղած անցքերը ներկայացընող գիտութիւնը:

Մեր յօդուածներն առջի բերան Ազգաց իրաւունքին սահմանին ու աղբիւրներուն վրայ պիտի ըլլան: Մախ պէտք է որ անոր ծագումը տեսնենք. — Բոլոր ազգերէ, այսինքն Տէրութիւններէ ճանչցուած օրէնագիր կամ դատաւորական հեղինակութիւն մը չկայ որ Տէրութեան

